


ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ




891.715

0-89

Խ. Ս. Հ. Մ. ԺՈՂՈՎՈՐԴՅԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926



П. ОРЛОВЕЦ.
ПУТЕШЕСТВИЕ НА АЭРОПЛАНЕ
На армянск. яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10

891.714
0-89

30 MAY 2011

№ 7 ԽՈՐՀՐԴՅԻՆ ԴՊՐՈՅԻ ԳՐԱԾԱՐԻ № 7



891.2-32


ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ

Թարգմ. ԱՄԵՌԻ



Ս. Խ. Հ. Մ. ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926



Կլիշեները տրամադրել է Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ հրատարակչությունը.

I

Ձե՛, հայրիկ ջան, մի անգամ ել ասա, յես ե՛լի յես ուզում
լսել,—ճշում եր Վիկտորը, ուրախությունից թռչկոտելով ինչպես
այծիկ, ձիգ տալով հոր փեշերը:

— Ի՛նչ անհավատն ես,—ասաց Իվան Նիկալայիչը, ուսե-
րը վեր քաշելով,—դու պետք ե վարձատրվես,—դու ցույց տվիր
ջանասիրություն և հաջողությամբ ավարտեցիր առաջին աստիճա-
նի լրացրոցի III խումբը, և ինչպես խոստացել եմ քեզ՝ դու ինձ
հետ կթուչես այերուպանով:

— Կթուչե՛մ, կթուչե՛մ: Ա՛յ .են ժամանակ ինչպե՛ս կծիծաղեմ
ագռավների վրա: Ա՛հ, ի՛նչ հետաքրքիր կլինի,—ճշում եր Վիկտորը:

— Իվան Նիկալայիչը ժպտում եր:

— Հա, սիրելիս, մարդը վաղուց ե՛ վոր ծիծաղում ե ագռավ-
ների և ուրիշ թռչունների վրա—ասաց նա.—նրանք թող հիմա
չմտածեն, թե ողը միայն իրենցն ե:



УЗЗ 81-63

3

— Մենք կթռչենք վեր-վեր: Մինչև անգամ ամպերից ել բարձր: Չե՞, հայրիկ, — անհանգստանում եր յերեխան:

— Այդ կտեսնենք: Համենայն դեպս, մեր ճամբորդությունը շատ հետաքրքիր կլինի:

— Իսկ դու եսոր ինձ վորևե բան պատմիր ողաշունների մասին, — խնդրեց յերեխան:

— Ուրախ եմ, վոր այդ քեզ շատ ե հետաքրքրում, — սիրով համաձայնվեց Իվան Նիկալայիչը: — Սպասիր, թեյը խմենք՝ հետո կպատմեմ:



— Յես իսկույն կվառեմ «պրիմուսը», — բացականչեց Վիկտորը: Նա վառեց «պրիմուսը», թեյը տաքացրեց և հայրն ու վորդին սկսեցին թեյել:

Թեյից հետո յերեխան լվաց և հավաքեց ամանները սովորականի նման, սրբեց սեղանի փշրանքները և նստեց հոր կողքին:

— Դե, հիմի յես պատրաստ եմ:

— Ուրեմն այդպես, դու ուզում ես իմանալ, թե ինչպե՞ս մարդիկ սովորեցին թռչել, — սկսեց Իվան Նիկալայիչը՝ քիչ լուռթյունից հետո:

— Այո՛, հայրիկ...

— Մարդիկ վաղուց եյին նախանձում թռչուններին, — սկսեց իր պատմությունը նա: — Դեռևս հին հույները յերազում եյին այն մասին, թե ինչպես սովորեն ողում թռչել, ու հնարել եյին մի հետաքրքիր առասպել՝ Դեդալի և նրա վորդու՝ Իկարի մասին: Այդ հեքիաթի մեջ ասվում ե, թե ինչպես Դեդալ անունով մեկը, վոր ապրում եր աքսորում, ուզում ե իր վորդու հետ հայրենիք վերադառնալ: Դեդալը իմաստուն և հնարագետ մարդ եր, և անամով իրար ամրացրած փետուրներից նա թևեր շինեց: Մի Գեղեցիկ որ ինքը և վորդին թևերը հագան ու թռչունների նման բարձրացան ողը: Բայց վորդին շատ վեր բարձրացավ ու մոտեցավ արևին: Ջերմ ճառագայթներից՝ մոմը հալվեց, և Իկարը գետին ընկավ մահացու վիրավորված:


— Բայց դա իրական չե՞, — ընդհատեց Վիկտորը:

— Իհարկե, դա հեքիաթ ե, — պատասխանեց Իվան Նիկալայիչը: — Բայց յես պատմեցի քեզ նրա համար, վորպեսզի ցույց տամ, թե ինչպես, վաղուց, մարդիկ մտածում եյին ողում թռչելու մասին: Իսկ թե յե՞րբ նրանք հասան իրենց նպատակին, — այդ մասին յես կասեմ այն, վոր դեռ 1670 թվին Ֆրանցիսկ Լանա անունով մի վանական փորձեց թռչելու գործիք շինել, իսկ 1709 թվին Լիսաբոնում, Փորթուգալիայի մայրաքաղաքում, Դոն Լորենցո Գուսման անունով մեկը առաջին անգամ շինեց մի ողապարիկ, վորը ողը բարձրացավ. վերջապես 1783 թվին, Փարիզում, Շարլ Մոն Գոլֆեյն շինեց մի ողապարիկ, վորով կարողացան բարձրանալ ինքը և յեղբայրը: Այդ ժամանակվանից ողաշվությունը սկսեց զարգանալ: Ողապարիկները, — վորոնցով մարդիկ բարձրանում եյին, — պատրաստում եյին՝ դիմացկուն և պինդ մետաքսից, ու մեջը լցնում տաք ողով: Նրանցից կախում եյին ողաշունների համար շինված զամբյուղներ, և վորովհետև տաք ողը սառը ողից թեթև ե՝ գունդը բարձրացնում եր: Թռչելիս, ողի սառչելու հետ, գունդը հետգհետե իջնում եր ցած, և վերջապես ընկնում գետին:

Իվան Նիկալայիչը, փոքրիկ լուռթյունից հետո, շարունակեց.


— Այն ժամանակ մարդիկ սկսեցին մտածել, թե ինչով փոխարինեն տաքացրած ողը: Հարցը շուտով վճռվեց: Բանը նրանում

ե, վոր ջրածին գազը թեթև ե ողից: Այդպիսի ողապարիկներ կարող եյին թռչել այն ուղղությամբ, ինչպես կըշեր քամին, իսկ ողի մեջ ավելի բարձրանալու և ցածրանալու համար, նրանք ունեյին ավազով լիքը պարկեր և ողապարիկի վրա սարքած անցքեր: Յերբ հարկավոր եր լինում ավելի վեր բարձրանալ՝ նրանք զամբյուղից ցած եյին գցում պարկերը և դրանով թեթևանում ու բարձրանում եյին, իսկ ցած իջնելու դեպքում նրանք բացում եյին ողապարիկի անցքերը, դատարկում գազի մի մասը, և գունդը իջեցնում: Վորպեսզի



գազը լավ մնա գնդի մեջ, գունդը նրանք պատում եյին ուտինի նոսր շերտով և բարձրացնում դնում եյին ցանցում, վոր ավելի ամուր մնա: Ողապարիկները սկսեցին շուտով կատարելագործվել,

բայց մարդիկ սնբավական եյին: Չե՞ վոր այդ գնդերը թռչում եյին այն ուղղությամբ, ինչպես քամին եր քշում նրանց, իսկ մարդը չեր կարողանում ղեկավարել: Այն ժամանակ մարդիկ սկսեցին մտածել այնպիսի ողապարիկների մասին, վորոնց կարելի լիներ ղեկավարել, և շուտով հնարեցին այն: 1852 և 1855 թվերին Ֆրանսայում յերևան յեկավ Հանրի Ժիֆֆար անունով մի գիտնական, վորը հնարեց ղեկավարելու հարմար մի այբրոստատ: Հանրի Ժիֆֆարի գունդը ձվաձև եր, լցվում եր գազով և ուներ մի ուժեղ շոգեմեքենա, վորը շարժում եր առանձին թևերը: Այդ մեքենայի ոգնությամբ շարժվող այբրոստատը ողապարիկին տալիս եր մի վայր-



կյանում յերեք մետր արագություն: Ողաչվությունը արագ կերպով առաջ եր գնում, և հիմա մարդիկ վաղուց արդեն ծանոթ են հսկայական այբրոստատների, Յեպելլինի սխստեմի և նման միջոցների հետ, վորոնք բարձրացնում են ահագին ծանրություններ ու թռչում ազատ կերպով, ամեն ուղղությամբ: Ռուսաստանում ողապարիկը առաջին անգամ գործադրության մեջ մտավ 1885 թվին:

— Իսկ այբրոպլանները,—ընդհատեց Վիկտորը:

— Հիմա դրա մասին ել կխոսենք,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը.—մարդիկ սկսեցին մտածել այն մասին, թե ինչպես բարձրանան ողում այնպիսի գործիքներով, վորոնք ողից ծանր են, վորոնք կարիք չունենան վո՛չ տաքացրած ողի, վո՛չ գազի, և կարողանան թռչել միայն շարժիչ մեքենայի և թևերի ոգնությամբ: Հան-

դեռ յեկան նոր հնարագետներ, վորոնք ուշագրութիւն դարձրին թղթե ոգապարիկներն վրա:

Ճարտարապետ Լիլիենտալը Բերլինում հնարեց թեւովոր մի գործիք, վորով նա կարողացավ, սարի գլխից, քամու դեմ թռչել 300 մետր: Ֆրանսացի Գանդրիյեն հնարեց մի «թիթեռ», վորը բարձրանում եր շատ վեր ու շարժվում եր գալարված ուտինի ոգնութեամբ. և վերջապես, իտալացի Ֆորլանինին շինեց թռչող պտուտակավոր մեքենայի առաջին որինակը, վորը բարձրանում եր շոգու ոգնութեամբ: 1893 թվին, Ֆիլիպիս Գորացին շինեց մի մեքենա՝ մատորով և յերկթեւանի պտուտակավոր պրոպելլերով: Այդ գործիքը գետնից բարձրացավ միայն մեկ արշին: Իսկ 1894 թվին, ճարտարապետ Մաքսիմը շինեց մի հսկայական այերոպլան, վորը բաղկացած եր տասից ավելի թեւերից, 360 ձիու ուժ ունեցող շոգեմեքենայով: Այդ գործիքը շարժման մեջ դնելիս՝ մի քանի մետր բարձրացավ, բայց ընկավ ու ջարդվեց: Այդ ժամանակվանից ողաշվութիւնը սկսեց արագ զարգանալ նոր ուղղութեամբ: Բայց քիչ զոհեր չեղան, մինչև վոր մարդը տիրապետեց ողին: Առաջին գործիքները քիչ եյին կատարելագործված և մատորները թույլ եյին, հաճախ փչանում կամ պայթում եյին ողում ու կորստի մատնում հարյուրավոր խիզախ, շնորհալի մարդկանց, վորոնք պայքարում եյին ողի դեմ:

— Ափսո՛ս—հառաչեց Վիկտորը:

— Այո՛, իհարկե՛ ափսոս, — համաձայնեց Իվան Նիկալայիչը. — բայց ի՞նչ արած: Բայց և այնպէս անհաշտութիւնները չվհատեցրին մարդուն: Նա համառ կերպով շարունակեց պայքարել ողի դեմ, մինչև վորնվաճեց այն: Հիմա մենք ունենք այնպիսի ապարասներ, վորոնցով կարելի յե թռչել համարյա անվտանգ (թեկուզ դրանց մատորը թռչելիս պայթի), քանի վոր նրանք սարքված են այնպէս, վոր կարող են հավասարակշռութիւնը պահել, և իջնել առանց մատորի:

— Բայց և այնպէս — թռչելը շատ յերկոտղալի յե, — խոսեց Վիկտորը մտահոգ:

Իվան Նիկալայիչը քմծիծաղեց:

— Այո, առաջին անգամ թռչելը անհաճո բան ե վախկոտ մարդու համար, — ասաց նա. — բայց դու շուտ կսովորես: Իսկ առաջիմ՝ եղբանը հերիք ե: Դու դեռ շատ բան կիմանաս՝ թռչելիս:

Յեվ Վիկտորը հորը բարի գիշեր ասաց ու գնաց քնելու.

II.

Յերեք որ Իվան Նիկալայիչն ու Վիկտորը պատրաստութիւն եյին տեսնում առաջիկա ճամբորդութեան համար:

Բանը նրանումն եր, վոր Իվան Նիկալայիչը տեղափոխվում եր Թիֆլիս ծառայութեան, և նա վորոշեց այդ ճամբորդութիւնը կատարել այերոպլանով:

Վորովհետև ինքը ողաշու յեր, դրա համար ել նրան հաջողեց ձեռք բերել յերկու տեղ՝ մարդատար այերոպլանում, վորը թռչելու յեր Լենինգրադից Թուրքեստան, և իջևանելու Մոսկվա ու Թիֆլիս:

Իվան Նիկալայիչը բոլոր իրերը ուղարկեց արագընթաց գնացքով, հետը վերցրեց միայն մի պայուսակ ուտեստի համար, մի վերմակ, բարձ՝ Վիկտորի համար, և յերկու ձեռք սպիտակեղեն: Բացի դրանից, ճանապարհի համար հետը վերցրեց տաք վերարկուներ և կոշիկներ:

— Հայրիկ, չե՞ վոր տաք ե, — ընդդիմացավ Վիկտորը:

— Դու չգիտե՞ս վոր բարձր սարերի վրա ձյունը չի հալչում՝ մինչև անգամ ամառը: Չե՞ վոր մենք թռչելու յենք Կովկասյան լեռնաշղթայով, — պատասխանեց Իվան Նիկալայիչը:

— Ճիշտ ե, ճիշտ ե, — մտաբերեց Վիկտորը, — ո՛ր, ինչ լավ ե, մենք կթռչենք՝ ինչպէս Լերմոնտովի Դեր:

— Յեվ դու կտեսնես — ճիշտ ե արդոյդ Լերմոնտովը նկարագրել Կովկասը՝ յերբ մենք թռչելիս կլինենք բարձրում, — ասաց Իվան Նիկալայիչը:

Նրանք միասին գնացին գնումներ անելու, և միասին շտապ տեղավորեցին իրենց պիտույքները:

Յերեք որը շուտով անցավ: Այդ ամբողջ ժամանակի ընթացքում Վիկտորը իրեն հերոս եր զգում:

Բոլոր ծանոթ յերեխաները նախանձում եյին նրան, ու շարունակ խոսում ճամբորդութեան մասին:

— Դու մեզ նամակ գրի: Ամեն ինչը գրի, — խնդրում եյին ընկերները:

— Դե իհարկե կգրեմ, — ասում եր Վիկտորը:

Յեվ ահա, վերջապես, հասավ թռչելու ուրը:

Այդ ուրը Վիկտորը առավոտ ծեփին վեր կացավ: Յեղանակը հիանալի յեր: Արևը փայլում էր, բայց մեր հերոսի սիրտը ենքան էլ հանգիստ չեր: Նա թագուն վախենում էր, բայց չեր ասում:

Թեյից հետո Իվան Նիկալայևիչը սենյակի բանալին հանձնեց, վերցրեց պայուսակը և Վիկտորի հետ ուղևորվեց դեպի այերողը*):

Այերողում վերջին պատրաստութուններն էյին տեսնում:

Յունկերս սիստեմի շքեղ ապարատը աչքի յեր ընկնում մյուսների մեջ:

Ողաչու Մազուրովը ու մեքենագործ Պավլովը ման էյին գալիս մատորի շուրջը:

Այնտեղ էյին նույնպես յերկու ճանապարհորդներ՝ Շեվելովը ու Կրանցը, վորոնք թռչելու էյին Թուրքեստան:

Ողում սավառնում էյին յերկու սավառնակ, ու լսվում էր պրոպելլերի աղմուկը:

Վիկտորը պատուհանից դիտում էր մարդատար կայուտը:

Դա մի շատ փոքրիկ, փափուկ կահավորված շքեղ սենյակ էր:

Առաջից՝ առանձնացրած էր մի փոքրիկ մաս՝ ողաչուի և մեքենագործի համար: Յերեխայի սիրտը աւամա ճմլվում էր: «Իսկ յեթե հանկարծ ընկնենք ու շարգվենք»,—այս միտքը կրծում էր նրա ուղեղը:

Այդ ժամանակ մատորը սկսեց աշխատել, և պտտվող պրոպելլերը աղմկեց, շարժելով ողը և առաջացնելով ուժեղ ալիքներ:

Վիկտորը կարծես հանգստացավ ու հաշտվեց դրության հետ:

— Դե, մտեք,—ասաց Մազուրովը:

— Վախենում ես,—հարցրեց Իվան Նիկալայևիչը վորդուն:


— Սոսկալի յե,—խոստովանեց Վիկտորը:

Կայուտի դուռը բացվեց, և ճանապարհորդները սկսեցին բարձրանալ աստիճաններով:

— Ուշադրություն դարձրեք մատորի և յուղոցների վրա,—լսվեց ողաչուի ձայնը:

— Պատրաստ ե, —պատասխանեց մեքենագործը:

*) Այերողականների իջնելու տեղը:



Ողաչուն ու մեքենագործը բռնեցին իրենց տեղերը, և Մազու-
րովը բաց թողեց գազը:

Հետո մատուրին թեթև շարժումներ տալով, բարձրացրեց ջեր-
մությունը 80 աստիճանի, ու մտիկ տվեց այբրոգրոմի ուղղորդին:

Ուղղորդը նշան տվեց բարձրանալու:

Մազուրովը լիովին բաց թողեց գազը:

Ապարատը դողաց ամբողջ մարմնով ու սկսեց վազել գետնի
յերեսով: Վիկտորը սրսփաց ու ամբողջովին թուլացավ: Նրան հան-
կարձ սարսափը բռնեց, ու քիչ եր մնում ճշար:

Այբրոպլանի ընթացքը հետզհետե սկսում եր արագանալ. նա
արդեն թռչում եր:

Մազուրովը ավելացրեց անհրաժեշտ արագությունը, ուղղեց
ապարատի դեկը ու սկսեց թափ տալ թռիչքին:

Յեվ հանկարձ Վիկտորը զգաց, վոր ցնցումները դադարեցին:

Յունկերսը հեռացավ յերկրից ու միալար սկսեց բարձրանալ
ոդոմ՝ միշտ վեր ու վեր:

— Մենք թռչում ենք,—մըմջաց Վիկտորը կամաց:

— Թռչում ենք,—ասաց Իվան Նիկալայևիչը,—նայիր պատու-
հանից:

Վիկտորը նայեց պատուհանից:

Յերկիրը հեռանում եր վոտի տակից ու մնում շատ ներքևում:


Ապարատը քիչ թեքվեց աջ թևի վրա, պտույտ տվեց ու
կրկին բարձրացավ:

Ահագին տները վերեից յերևում էին ինչպես փոքրիկ տուփեր,
վորոնք գեռ հետզհետե փոքրանում էին. փողոցները դարձել էին
յերիգներ, վորոնցով անց ու դարձ անող մարդիկ ու ձիերը խա-
ղալիքների նման էին յերևում:

Բայց ահա ապարատը ելի բարձրացավ, հասավ մինչև ութ հա-
բյուր մետրի, և ուղղվելով՝ սկսեց ուղղակի առաջանալ:

Լենինգրադը գեղեցիկ եր ներքևում:

Առանձին տները գրեթե ձուլվել էին միմյանց, փողոցներն ու
միջուղիները կազմել էին գծերի մի լայն ցանց, իսկ նրանց ա-
րանքում, պողպատի նման փայլուն, կղզիներով ծածկված՝ ասես մի
լայն ժապավեն՝ փոված եր գեղեցիկ Նևան, վորի վրա, վորպես սև



կետեր, շարժվում էին ամեն ուղղությամբ շոգենավեր ու նավեր:

— Ա՛խ, ինչ լավ ե,—բացականչեց Վիկտորը:

Պատկերը իսկապես վոր հիանալի յեր:

Մի կողմում յերևում եր թռչող մի արագիլ:

Ինչ վողորմելի թվաց նա Վիկտորին, այբրոպլանի հետ համե-
մատած:

— Մենք անց կացանք արագիլից. ե՛հ, թռչուններ...—ծիծաղեց
Վիկտորը:

Նրա վախը արդեն անցել եր:

— Մենք թռչում ենք մի ժամում հարյուր հիսուն վերստ ա-
րագությամբ,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը:

— Արագընթաց գնացքից ել արագ,—հարցրեց Վիկտորը զար-
մացած:

— Շատ ավելի արագ, բայց այդ դեռ վերջնական արագու-
թյունը չի,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը:

Փողոցներն ու թաղերը այլևս չէին յերևում:

— Ա՛յ, ահա և ծովը,—ասաց Իվան Նիկալայևիչը:

Վիկտորը նայեց ցույց տված ուղղությամբ և ուրախությու-
նից հառաչեց:

Կապույտ, փայլուն ծովը, սկսած հենց Լենինգրադից, փռված
եր աջ կողմը, ու ձգվում եր հեռուն, դեպի հորիզոնը, գեղեցկուհի
Նեայից դենը:

— Ֆինլանդական ծոցն է,—ասաց Իվան Նիկալայևիչը,—իսկ
այնտեղ, հեռուն, սևին է տալիս Կոսլին կղզին, վորի վրա յերե-
վում է քաղաքն ու Կրոնշտադտ բերդը: Աջ ափը—Ֆինլանդյան է:

Արևի պայծառ ճառագայթների ներքո, ծովը թվում եր մի
հսկայական կապույտ հայելի, վորը հորիզոնի մոտ ձուլվում եր
յերկնքի հետ:

Կապույտ մակերևույթի վրա սև բծերի նման նկատվում էին
ձկնորսական նավակների առագաստները և շոգենավերը:

— Այո՛, մարդը հաղթեց ողին, ինչպես հաղթեց կրակին ու
ջրին,—ասաց Իվան Նիկալայևիչը մտահոգ,—չկա աշխարհում մի
թռչուն, վոր կարողանա թռչել այնպես բարձր, ինչպես հիմա
մարդն է թռչում:

— Իսկ ինչպիսի՞ բարձրություն կարելի չե հասնել այերոպլա-
նով,—հետաքրքրվեց Վիկտորը:

— Հը՛մ... Դա կախված է ապարատից: Բայց, համենայն դեպս
մարդիկ արդեն բարձրացել են մինչև 11 հազար մետր, վոր մոտ
11 վերստ է անում,—խոսակցության մեջ մտավ ճանապարհորդ
Կրանցը, վորը մի նիհար, շեկ մարդ եր՝ դժգույն դեմքով:

— Դա մի բարձրություն է, վորին վոչ մի սար չի հասնի աշ-
խարհում,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը:

Քիչքիչ՝ Լենինգրադը չքանում եր աչքից:

Այժմ այերոպլանը թռչում եր խիտ անտառներով ծածկված
յերկրի վրայով, մեկ-մեկ յերևում էին դաշտերը, նրանց վրա՝
հազիվ նկատելի գյուղեր ու փայլուն գետեր:

Վիկտորը անդադար նայում եր պատուհանից, հրճվելով նո-
րանոր տեսարաններով:

Ժամանակը անցնում եր աննկատ:

— Այդպես ուրեմն, մենք թեքում ենք մեր ճանապարհը,—
ասաց Շեվիկեր, վոր լուռ եր մինչև հիմա:

— Այո՛, մենք գնում ենք այժմ դեպի արևելք՝ հրճվելու

Լադոգյան լճով, բայց այնտեղ յերկար չենք մնա,—պատասխանեց
Կրանցը:

— Յեվ դու կտեսնես այնտեղ Վոլգայի ելեքտրակայանի հսկա-
յական կառուցումը,—ասաց Իվան Նիկալայևիչը, դառնալով իր
վորդուն:

— Դա ի՞նչ է,—հետաքրքրվեց Վիկտորը:

— Շուտով կտեսնես: Բայց կպատմեմ քեզ համառոտ:

Նա առանց շտապելու, ծխելով՝ շարունակեց.

— Մարդիկ վաղուց արդեն սովորել են ոգտագործել ջրի ու
քամու ուժը: Այդ յերկու ուժերը ձրի յեն, և յեթե դրանք ոգտա-
գործվեն, ապա ազատ կերպով կարող են փոխարինել շոգենավե-
նաներին, վորոնց վառելիքը անագին ծախս է նստում: Վաղուց
արդեն մարդիկ ոգտվում են քամուց, վորը շարժում է հողմա-
ղացը և առագաստանավը, իսկ ջրի հոսանքի ուժից՝ ոգտվում են
ջրաղացի անիվները պտտեցնելու համար: Բայց քամին—հարատև
ուժ չի, մինչդեռ ջրի հոսանքը միատեսակ ու շարունակական է:
Յեվ այդպես, մարդիկ այժմ ոգտվում են արագընթաց գետերից ու
ջրվեժներից՝ մեքենաներ աշխատեցնելու համար: Մարդիկ հնարե-
ցին հսկայական «տուրբինա» կոչված անիվները, վորոնք ունեն ջրին
հարմարեցրած թևեր:

— Յեթե այդպիսի անիվին կցենք մի առանցք, այնպես, վոր
այդ անիվի թևերին ջուրը խփի՝ այն ժամանակ անիվը կսկսի պտույտ
գալ, և նրա հետն ել առանցքը: Առանցքի վերին ծայրը ունի իրեն
կից ի ուրիշ անիվ, վորին գցած է մի փուկ: Յեթե ջրի ափին
դրվի մի դինամո,—վորը տալիս է ելեքտրական էներգիա,—ու փուկը
անց կացվի դինամոյի առանցքով ու տուրբինը բաց թողնվի՝ այն
ժամանակ ի՞նչ կստացվի:

— Անիվը կպտտվի, ինչպես և այն անիվը, վոր կցված է նրա
առանցքին,—ասաց Վիկտորը:

— Յեվ, ուրեմն, մեքենան կսկսի աշխատել,—շարունակեց
Իվան Նիկալայևիչը.—տուրբինի համար վոչ փայտ է հարկավոր,
վոչ ածուխ, նա ջրի ուժով կպտտվի շարունակ, և վորքան մեծ լի-
նի ջրի ուժը, այնքան ավելի մեծ ուժ նա կհաղորդի մեքենանե-
րին: Բայց նայիր ձախ պատուհանից: Մի՛ վախենա, կարող ես

կանգնել և ազատ ման գալ կայուստում: Ողում, մանավանդ ուղիղ թռչելիս, այնքապալանը շատ կայուն է:

Վիկտորը, վոր մինչև այժմ վախենում էր, ուժեղ ցնցում արավ և անվստահ կանգնեց, մոտեցավ ձախ պատուհանին:

— Լադոգյան լիճը, — այդտեղից է սկիզբ առնում Նևա գետը, — առաջ կրանցը:

Ներքևում, դեպի ձախ, կանաչ, տերևախիտ փերով փոված էր հսկայական լիճը, վորը, վերևից նայելիս, նման էր մի վիթխարի հայելու:

— Այդ լիճը հարավային կողմից մի ջրանցքով միանում է Վոլխով գետի ու Իմեն լճի հետ, — վերհիշեց Վիկտորը:

— Միանգամայն ճիշտ է, — հաստատեց հայրը: — Այդ ջրանցքը փորված է նրա համար, վոր միացնի Ֆինլանդական ծոցը Կասպից ծովի հետ: Յեվ հիմա նավերը կարողանում են Լենինգրադից, Նեվայով լողալ Լադոգյան լիճը և այդտեղից ջրանցքով — Վոլխով գետը, ու այսպես՝ մինչև Վոլգա գետը և, վերջապես, Վոլգա գետով դուրս են գալիս Կասպից ծովը:

Յունկերսը արագ թռչում էր լճի փերով:

— Այ, ողաչուն ավելացրեց արագությունը: Մենք թռչում ենք մի ժամում համարյա յերկու հարյուր վերստ, — նկատեց կրանցը, նայելով արագությունը ցույց տվող գործիքին:

— Հազար յերկու հարյուր մետր բարձրությամբ, — ավելացրեց Շեվելեր:

Ջրանցքը յերևաց՝ ինչպես մի յերկար ժապավեն:

Լադոգյան լիճը յետ մնաց, բայց շուտով նրա փոխարեն յերևաց մի ուրիշ, ավելի փոքր հայելի: Դա Իմեն լիճն էր:

Մագուրովը լծակը յետ քաշեց և Յունկերսը առաջ թեքվելով՝ սկսեց ցածրանալ:

Բայց ահա Մագուրովը ուղղեց լծակը և Յունկերսը սկսեց հարթ ու խաղաղ սավառնել:

— Յերեք հարյուր մետր բարձրության վրա յենք, — նկատեց Իվան Նիկալայիչը: — Նայի՛ր, Վիկտոր, գետի այն մասը, վորտեղ կտրվում է յերկաթուղու գծով, այդ հենց այն տեղն է, ուր Վոլխովն է թափվում:

Վիկտորը նայեց այդ ուղղությամբ ու տեսավ մի ամբողջ շարք շինություններ:

— Հենց դա՛ Վոլխովի ելեքտրակայանն է, վոր շինվում է, — բացատրեց Իվան Նիկալայիչը: — Դա մեր ազատ ժողովրդի զավակն է, դա հեղափոխությունից հետո ամենամեծ շինարարությունն է: Նայի՛ր, տեսնո՞ւմ ես գետի ափերով ամրացրած պլատինի թիթեղները:

— Տեսնում եմ, — պատասխանեց Վիկտորը:

— Այդ պլատինների շնորհիվ ջուրը բարձրանում է գետում ու ջրվեժ կազմելով՝ թափվում է տուրբինների վրա ու շարժում նրանց: Իրենց հերթին, տարբիները շարժում են ահագին դինամո մեքենաները, և այդ դինամոները տալիս են ելեքտրական այնպիսի ուժ, վոր բավական է Լենինգրադի ամբողջ արդյունաբերության համար, — պատմում էր Իվան Նիկալայիչը:

— Բայց Լենինգրադից բացի, ծրագրվում է ելեքտրականությամբ լուսավորել Վոլխովից դեպի Լենինգրադ տանող ճանապարհի վրա ընկած բոլոր գյուղերը, — նկատեց Շեվելեր:

Վիկտորը նորից նայեց պատուհանից, բայց արդեն վոչինչ չէր յերևում, բացի անտառներից:

Այն ինչ, ապարատը թեթև կերպով թեքվեց ձախ թևի վրա, պտույտ կատարեց, բարձրացավ հազար մետրի վրա, դեպի հարավ՝ Մոսկվայի ուղղությամբ:

Բազմաթիվ տեսարաններից հոգնած, Վիկտորը նստեց փափուկ բազկաթուղին և աննկատելի կերպով ննջեց:

III

Նա մի յերկու ժամ քնեց:

Այն ինչ, Յունկերսը Մագուրովի վարպետ ձեռքերի ղեկավարությամբ դուրս յեկավ Նիկալայևսկի յերկաթագծի վրա և սկսեց սավառնել այդ գծով:

Բոլոգոյե կայարանի մոտերը տեսարանները փոխվեցին:

Հիմա ճանապարհորդների աչքին յերևում էին արդեն վոչ թե խիտ անտառներ, այլ բնակած վայրեր, — քաղաքներ ու գյուղեր:



Նրանք թռան Տվերի ու գեղեցիկ Վոլգայի վրայով:

Վիկտորը յերևի այդպես էլ կքներ մինչև Մոսկվա, յեթե նրան ձայն չտար Իվան Նիկոլայևիչը:

— Դե՛, դե՛, հերիք ե քնես, — ասաց նա, — հիմա հասնելու յենք Մոսկվա:

Յերեխան զարմացած բացեց աչքերը ու հանցավորի նման ժպտաց:

Նա ամաչեց, վոր քնել էր:

Նա արագ ուղղվեց ու նստեց պատուհանի մոտ:

Ժամի 3-ն էր:

Յերկինքը միանգամայն պայծառ էր, և ապարտաբ սավառնում էր արևի շողերի միջով:

Յեվ հանկարծ, ապարտաբ ցնցվեց ու արագ թեքվեց դեպի աջ:

— Ահ, — ճչաց Վիկտորը վախեցած, հազիվ իրեն պահելով աթոռի վրա:

Բայց նա դեռ ուշքի չեկած, ապարտաբ արդեն ուղղվեց ու շարունակեց սավառնել առաջ, վորպես թե վոչինչ չէր պատահել:

— Հայրիկ, եղ ի՞նչ պատահեց, — հարցրեց Վիկտորը վախեցած:

— Դատարկ բան է: Մենք թռանք ողում փոսի վրայով:

— Ողում՝ փո՞ս, — զարմացավ յերեխան, — բայց ողում ի՞նչ փոս կարող ե լինել:

— Դրանք նույնպես կոչվում են ողային փոսեր կամ հորեր, — բացատրեց Իվան Նիկոլայևիչը: — Չե՞ վոր դու սովորել ես, վոր ծովերում ու ովկյաններում կան յերկու հոսանքներ՝ տաք և սառը: Այդ հոսանքները կայուն ջրում նման են գետերի: Ջուրը հասարակածի մոտ սաստիկ տաքանում ե, իսկ բևեռներում՝ սառչում: Յեվ ահա, ծովում տեղի յե ունենում տաք և սառը ջրերի փոխանակումն: Հյուսիսում՝ սառած ջուրը հոսում ե դեպի հարավ, իսկ հարավի տաքացած ջուրը՝ դեպի հյուսիս: Այդ հոսանքները կանոնավորում են ջրի շերմության աստիճանը և առհասարակ կլիման: Այդ նույն բանը տեղի յե ունենում և ողի հետ: Տաք ողը ձգտում ե բարձրանալ վեր, իսկ սառը իջնում ե նրա տեղը, դեպի ցած: Տաք ողերին, յերկրին մոտիկ ողի շերտը տաքանում ե ու


սյուններով բարձրանում դեպի վեր, իսկ նրա տեղ, վերևում գլտնված ցուրտ ողը իջնում ե ներքև, դեպի ցած: Հենց այդ հոսանքները կազմում են հորեր, վորոնց մեջ ողը մեկ բարձրանում ե, մեկ իջնում:

Հեռուն, հորիզոնի վրա յերևաց մի հսկա քաղաք:

— Մոսկվան, — ասաց Իվան Նիկոլայևիչը, դառնալով վորդուն:

— Տե՛ս, Վիկտոր, ի՞նչ գեղեցիկ ե:

Վիկտորը նայեց պատուհանից:



Հեռուն, ներքևում, դեպի առաջ, սպիտակին եր տալիս հսկա քաղաքը, կարծես ամբողջութամբ ոսկե աստղիկներով զարդարված: Դրանք բազմաթիվ զանգակատների վոսկեզոծ գմբեթներն են, վոր փայլում են: Գործարանների ծխնելույզները հազար մետր բարձրությունից՝ նման են սև մատիտների, վորոնք տնկված են քաղաքի շրջակայքը՝ շինություններին կից, վորոնք նույնպես, ասես թե բազմապիսի խաղալիքներ լինեյին:

Այդ տները զանազան ուղղութամբ կտրտված են մութ գծերով:

Դրանք փողոցներն ու միջուղիներն են, վորոնք հեռից յերևում են ինչպես մութ գծերի մի ցանց:

— Ասես թե իսկական սարդ լինի՝ վոստայնում, — ակամայից նմանեցրեց Վիկտորը, նայելով քաղաքին:

Այն ինչ՝ ապարատը արագությամբ մոտենում էր քաղաքին։

Ահա, դիմացը դուրս յեկավ Ֆարմանի սիստեմի մի այրու-
պլան։ Հեռուն, քաղաքի վրա ճախրում էին ելի յերկու այրու-
պլաններ։

Յերևի զինվորական ուղաչուներ էին, փորձեր էին անում։

— Ինչ գեղեցիկ է, հայրիկ, հայրիկ, մի տե՛ս,— բացական-
չում էր Վիկտորը, անընդհատ քաջաշելով հոր փեշերը։

Քանի մոտենում էր ապարատը քաղաքին, այնքան ավելի գե-
ղեցիկ ու հմայիչ էր յերևում Մոսկվան։

Մագուրովը իջեցրեց ապարատը և հասավ մինչև հինգ հարյուր
մետր բարձրության։

Այժմ կարելի էր նկատել ձիերը, կառքերը, մարդկանց, վո-
րոնք շարժվում էին ամեն ուղղությամբ։

Յերկաթգծով դուրս սողաց քաղաքից գնացքը, վոր նման էր
ոձի, իր յետևից թողնելով ծխի մի յերկար քուլա. մյուս կողմից,
հորիզոնում յերևաց մի ուրիշ գնացք, վորը դանդաղ մոտենում
էր քաղաքին։

Ծառաշատ պարտեզները, մարգերը և քաղաքային ծառու-
ղիները կանաչ յերեզների նման զարդարում էին քաղաքը, իսկ
քաղաքի միջով, պողպատի փայլով տարածվում էին Մոսկվա գետն
ու իր Յաուզա վտակը։

— Այ, այնտեղ է այերողորմը,— ասաց Իվան Նիկալայիչը,—
հիմա պիտի իջնենք։

Յեվ իսկապես, մի քանի բուպեյից հետո, Մագուրովը գազը
կտրեց, և ապարատը, վոր Պետրովսկի ծառաստանի վրա յեր՝ սկսեց
արագ ճախրել դեպի այերողորմը։

Դեռ յերկրին չհասած, 1—1½ մետր բարձրության վրա,
Մագուրովը վերջնականապես կանգնեցրեց մատորը, դեկը շուռ
տվեց դեպի իրեն, և ապարատը ուղղվելով՝ նստեց գետնին՝ շարու-
նակելով վորոշ ժամանակ վաղ տալ անիվների վրա, ցատկելով
անհարթությունները։

Բայց ահա ապարատը կանգնեց, ու ճանապարհորդները իջան
իրար յետևից։

Ինչքան ելլավ լինել ողում ճանապարհորդելը, Վիկտորը ու-
րախացավ, յերբ վոտը դրեց պինդ հողին։

Նա չորս կողմը՝ նայեց՝ դիտելով այերողորմը։

Դա փայտից շինած ծածկոցների ու վրանների մի ամբողջ
քաղաք էր, ուր յեռում էին մարդիկ։

Մի քանի մեքենաներ շարքով պատրաստվում էին թռչելու,
մի քանիսը ճախրում էին ողում։

Վիկտորը աչքերին չեղ հավատում։

— Հայրիկ, հայրիկ, այստեղ ինչքա՛ն այերողյան կա,— հար-
ցրեց նա։— Ինչո՞ւ այսքան շատ են։ Միթե՞ այդ բոլորը թռու-
չելու համար են։

— Իվան Նիկալայիչը ժպտում էր։

— Այո՛, այս մեքենաները մեր հանրապետության հպարտու-
թյունը և ուժն են կազմում,— ասաց նա։— Մեր ողային տորմիդը կա-
ռուցվում է մեծ մասամբ հենց ժողովրդի՝ պրոլետարիատի նվի-
րատվություններով։ Սրանց կեսից ավելին շինված է մեր գործա-
րաններում։ Հեղափոխության ընթացքում մեր յերկիրը աղքատա-
ցավ, և միայն հիմա յե, վոր նա դուրս է գալիս տնտեսական քայ-
քայումից ու կազդուրվում է։ Սպիտակ գեներալները իրենց հետ
տարան ռազմական բոլոր նավերը, իսկ մենք փող չունեյինք, վոր
կառուցեյինք մեր նավատորմիդը։ Բայց դրա փոխարեն մեր հան-
րապետությունը ձեռք բերեց ողային հզոր տորմիդ, վորը մեծա-
նում է որեցոր։ Այդ տորմիդը— ժողովրդական է. նրա կառուցմանը
մասնակցում են յերկրի բոլոր աշխատավորները։

— Յեվ նրանք կմասնակցեն, մինչև վոր մեր ողային տորմիդը
կդառնա ամենից առաջինը,— շեշտեց Կրանցը։— Յուրաքանչյուր
քաղաքացու սրբազան պարտքն է՝ իր ուժերի համեմատ՝ ոգնել
այդ գործին։ Չե՞ վոր մենք ուժեղացնում ենք մեր տորմիդը վոչ
թե հարձակումներ անելու, այլ պաշտպանվելու համար։

— Դուք միանգամայն ճիշտ եք,— համաձայնվեց Իվան Նիկա-
լայիչը։— Աղատագրված ժողովուրդը չպիտի մնա անպաշտպան,
յերբ գազան կապիտալիստները պատրաստ են ամեն բուպե մեզ վրա
ընկնելու։

Յեվ դառնալով վորդուն՝ ասաց.

— Գնանք, Վիկտոր, հյուրանոցում կգիշերենք, իսկ վաղը նո-
րից ճանապարհ կընկնենք։ Թռչելու յենք առավոտը ժամը ութին։

Յեզ վեթե յեղանակը լավ լինի՝ յերեկոյան դեմ կլինենք Թիֆ-
լիսում:

Յեզ վորդու հետ նա գնաց Մոսկվա՝ իջևան փնտռելու:

Կարճատև վորոշումից հետո, նրանք մի սենյակ գտան: Ըն-
թրեցին և հայր ու վորդի քնեցին մեռածի նման:

IV

Հետևյալ առավոտ, յերբ նրանք յեկան այերողորմ՝ ամեն ինչ
պատրաստ եր թռչելու համար:

Սովորական պատրաստութիւնները տեսնելուց հետո, ճանա-
պարհորդները, ողաչուն ու մեքենագործը զրավեցին իրենց տեղերը.
ուղղորդը թռչելու նշանը տվեց, և ապարատը Մագուրովի ուժեղ
ձեռքերի ղեկավարութեամբ ողը բարձրացավ:

Վիկտորը առավոտից սկսած՝ ուշադրութիւն եր դարձրել ան-
սովոր քամու վրա:

Բայց ինչքան վոր Վիկտորը քիչ եր անհանգստանում, Իվան
Նիկալայիչը այնքան մեծ նշանակութիւն եր տալիս այդ քամուն:

Նա հաճախակի դիտում եր ծանրաչափը, վոր կախված եր կա-
յուտի պատից:

— Բայց ծանրաչափը սաստիկ իջնում ե, —ասաց նա, դիմելով
Կրանցին:

— Դուք կարծում եք փոթորի՞կ կբարձրանա, — վրա բերեց
Կրանցը:

— Դրութիւնը այդպես ե գուշակում:

— Այդ դեպքում մենք իզուր բարձրացանք:

— Յես ել եմ կարծում:

Վիկտորը պատուհանից դիտում եր ու հրճվում տեսարաննե-
րով: Մոսկվայից դեպի հարավ, յերկիրը կարծես սաստիկ փոխվում,
զվարթանում եր: Անտառները քչացան, հաճախ յերևում եյին մեծ
ու փոքր գյուղեր: Ամեն տեղ կանաչին եյին տալիս մարգագետին-
ները, փայլում եյին բազմաթիվ գետերը:

Ապարատը արագութեամբ դիմում եր առաջ, դիմադրելով
քամուն:

Թռչում եյին Սերպուխով քաղաքի վրայով:

Այն ինչ, քանի Յունկերսը առաջ եր ընթանում, Իվան Նիկա-
լայիչի դեմքը այնքան ավելի եր անհանգստութիւն արտահայտում:

Քամին ամեն բոլոր, սաստկանում եր և յերբեմն փչում կա-
տաղի, ստիպելով ապարատին թեքումներ կատարել մեկ աջ, մեկ
ձախ՝ հավասարակշռութիւնը պահելու համար:

Բայց Մագուրովը այերողանի թևերը ղեկավարող լծակները
բռնած, վարում եր ապարատը անվրդով, ուշադրութիւն չդար-
ձնելով վտանգին:

Նա փորձված ողաչու յեր, իր կյանքում շատ վտանգների յեր
հանդիպել և նրանց դեմ կռվել սովորել:

— Բայց ծանրաչափը իջնում ե շարունակ, — նկատեց Շևելը:

— Ես ի՞նչ ե, ա՛յ, մի անգամ յես մի փոթորիկ տեսա, վոր՝
զարմանում եմ՝ թե ինչպես կենդանի մնացի, — ասաց Իվան Նիկա-
լայիչը:

— Պատմեցեք, — վրա բերեց Կրանցը:

— Այդ տեղի ունեցավ սրանից մի տարի առաջ, — սկսեց Իվան
Նիկալայիչը: — Մենք պիտի թռչեյինք Մինսկից՝ Մոսկվա: Առավոտից
փչում եր սաստիկ քամի: Հարկավոր եր սպասել, բայց գործը շատ
շտապողական եր, դե յես ել, ուղիղն ասած, հույս ունեյի, թե քամին
կդադարի: Իմ մեքենագործը շատ հմուտ եր: Մի խոսքով, մենք
քննեցինք ապարատը ու թռանք: Թռչում ենք, բայց ծանրաչափը
իջնում եր շարունակ: Իսկ քամին կարծես մեզ պատռել եր ու-
ղում: Յեզ սկսեց իսկական մի փոթորիկ: Իսկ մենք թռչում ենք
հազար մետր բարձրութեամբ: Տեսանք՝ դրութիւնը շատ վատ՝ ե, Մեկ
ել տեսար՝ ապարատը շուռ եկավ, են ժամանակ՝ մնաս բարով:
Մտածեցինք իջնել, բայց հնարավոր չեր: Ներքևում անտառ
եր, ու հարմար մի դաշտ չեր յերևում: Քամին սաստիկ փչում եր
ձախից ու սպառնում ապարատը շուռ տալ: Նույնիսկ մի սառը
քրտինք յեկավ վրաս: Մեքենագործը նույնպես նստել եր վոչ կեն-
դանի, վոչ մեռած, ու մտիկ եր տալիս մատորին: Յես ճարպիկ
գտնվեցի և ապարատը թեքեցի քամու ուղղութեամբ, թեև քիչ
եր մնացել շուռ գայինք, և քամին սկսեց վարել մեզ ինչպես տա-
շեղի: Իսկ փոթորիկը սաստկանում եր շարունակ: Մեկ ել նկա-

տում եմ՝ ներքևում դաշտ կա: Դե՛, ասում եմ, վոր մեռնելը մեռ-
նել ե՛լ լավ ե քիչ ցածից ընկնենք, քան բարձրից: Բռնի՛ր քեզ,—
կանչեցի մեքենագործին:—Կանգնեցրո՛ւ մատորը:—Յեւ թողի ապա-
րատը իր բախտին:

— Ի՞նչպես թե իր բախտին,—չհասկացավ Վիկտորը:

— Լծակը յետ քաշեցի ու ապարատը գլխիվայր սկսեց սուրալ
գնդակի արագությամբ:

— Վա՛յ,—ճչաց Վիկտորը:

— Այո՛, դա սոսկալի բոպե յեր,— շարունակեց Իվան Նիկալայևիչ-
ը,—բայց և այնպես յես ինձ չկորցրի և շարունակեցի ապարատը
ղեկավարել: Դեռ յերկրին չհասած՝ 40—50 մետրի վրա, յես կա-
րողացա ուղղել ապարատը և անմիա՛ս իջնել դաշտը: Բայց ուժեղ
ցնցումներից փչացան մեքենայի մի քանի մասերը:

— Ի՞նչ սարսափելի բան,—բացականչեց Կրանցը:

— Ողաչույի կյանքը լի յե այդպիսի սարսափներով,—պատաս-
խանեց Իվան Նիկալայևիչը:

Յեւ նայելով ծանրաչափին՝ նա ավելացրեց.

— Բանը ենքան ել լավ չի:

Նա բացեց կայուտի միջի պատուհանն ու ձայն տվեց Մագու-
րովին.

— Սերգեյ Իվանիչ, լավ չի՞ լինի՛ իջնենք:

— Յես հակառակն եմ կարծում, բարձրանանք,—պատասխա-
նեց ողաչուն,—ամպերը ցած են իջնում:

— Դուք ճիշտ եք ասում,—խոսեց Իվան Նիկալայևիչը,—ամպե-
րից վեր կարող ե փոթորիկ չլինել և գուցե, կարող ե պատահել,
հանդիպենք հաջողակ հոսանքի: Վարվե՛ք այդպես:

— Դուք ուզում եք բարձրանալ,—զարմացած հարցրեց Շե-
վելը:

— Այո, յես ու Մագուրովը կարծում ենք, վոր վերևում ավե-
լի անվտանգ կլինի,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը:

Այդ ժամանակ Վիկտորը նկատեց, վոր ապարատը մեծ թե-
քումով վեր ե բարձրանում:

Նրա սիրտը ճմլվեց:

Ա՛հ, ինչքան նա կուզենար այդ բոպեյին յերկրի վրա լինել,

հաճելի սենյակում, ուր կարելի լիներ մոռանալ այդ սոսկալի ու-
վա տհաճ տպավորությունները:

— Մենք մտնում ենք ամպերի մեջ,—ասաց Իվան Նիկալայևիչը:

Վիկտորը վախեցած նայեց պատուհանից... սարսափեց:

Պատուհանի ապակու յետև թանձր մառախուղ կար: Կայուտը
մթնեց:

Դրությունը սաստիկ յերկյուղալի յեր:

Ապարատը մտավ ամպերի մեջ ու սկսեց թռչել թանձր, սառը
գոլորշիների միջով, վորոնք ամպերն եյին կազմում:

— Իսկ յեթե հանկարծ կայծակը խփի՞:

— Լռի՛ր,—սաստեց նրան հայրը:

Հոր պրոպելլերի ոգնությամբ, Յունկերսը պատուում եր թանձր
և խոնավ ամպերը ու շեշտակի բարձրանում:

Կարծես բոլորը արդեն հաշտվել եյին դրության հետ, սպասում
եյին դժբախտության:

Վիկտորի սիրտը խփում եր՝ բռնված ծախ նման:

Հանկարծ յերեխան նկատեց, վոր կայուտը լուսանում ե:

— Վե՛րջ,—ասաց Կրանցը թեթևացած:

Քանի գնում, չորս կողմը ավելի եր լուսավորվում: Մառա-
խուղը չքանում եր և հանկարծ՝ արևի պայծառ շողերը ընկան
կայուտը:

Յունկերսը թռչում եր ամպերի վրայով, ավելի բարձրացավ
ու հանկարծ ուղղվելով, սկսեց սավառնել սոսկալի արագությամբ:

— Կեցցե՛ս Մագուրով,—բացականչեց Իվան Նիկալայևիչը,—
նա գուշակեց. մենք ազատ ենք վտանգներից:

Յեւ իսկապես, 2500 մետր բարձրության վրա, ապարատը
հանդիպեց բարեհաջող հոսանքի, ուր փոթորկի մասին խոսք ան-
գամ չեր կարող լինել:

Հիմա նա արևի շողերի մեջ՝ սավառնում եր խաղաղ,
հպարտ՝ վոր հաղթել եր բնությանը: Վիկտորը նայեց պատուհանից
և ուրախությունից ազատ շունչ քաշեց: Նա ավելի գեղեցիկ բան
չեր տեսել իր կյանքում:

Վերևում, կապույտ յերկնքում փայլում եր արևը:

Իսկ ներքևը, դաշտի նման տարածվում եյին ամպերը, վո-


ըոնք արևի շողերի տակ փայլվում էին շաղ տված ակնեղենների նման:

— Հայրի՛կ, հայրի՛կ, նայի՛ր, — ճչում եր Վիկտորը:

— Այո, սա մի գեղեցկություն է, վոր անձանոթ ե սովորական մահկանացուներին, — բացականչեց Կրանցը, դիտելով սքանչելի տեսարանը:

Քամուց հալածված՝ ամպերը բաժանվում, լողում, ձևափոխվում էին մարգարտի հսկայական բյուրեղների նման:

Այդ տեսարանը դիտելիս, Վիկտորը ամեն ինչ մոռացավ աշխարհում, իսկ Իվան Նիկալայիչը, վոր սովոր եր այսպիսի տեսարանների, հանգիստ մեկնվեց բազկաթոռի վրա և ներհեց:



Ամպերի միջից յերկիրը չեր տեսնվում, և ապարատը առաջնորդվում եր կողմնացույցով:

Անցնում էին ժամեր:

Ժամի յերեքն եր՝ յերբ Վիկտորը նկատեց, վոր ամպերի թանձր վարագույրը պատռվեց, և նորից յերևաց յերկիրը:

Ամպերը սկսվեցին ավելի շատ կտրտվել, և վերջապես բոլորովին չքացան: Հենց այդ ժամանակ, Կրանցի ասելով, ծանրաչափը սկսեց բարձրանալ: Փոթորիկն անցավ:


Յեվ Մազուրովը իջնցնելով ապարատը հազար մետրի վրա՝ դիմեց առաջ:

— Ռոստով Դոնի վրա, — ասաց Իվան Նիկալայիչը, ցույց տալով հեռուն:

Հեռվում, ներքևը, յերևում եր քաղաքը՝ փռված լայն, փայլուն գետի ափերին:

Իվան Նիկալայիչը մի քանի խոսք ասաց Մազուրովին, և ապարատը քաղաքին չհասած, իջավ մինչև յերկու հարյուր մետր բարձրության:

— Ռուսաստանի մեծ քաղաքներից մեկը: Այստեղ կան բազմաթիվ գործարաններ, այստեղ գալիս են շոգենավեր՝ Ազովյան ծովից, դրա համար ել Ռոստովը համարվում ե այս շրջանի առևտրական կենտրոնը, — բացատրեց Իվան Նիկալայիչը:



Այդ ժամանակ ապարատը թռչում եր արդեն քաղաքի վրայով:

Հանկարծ Վիկտորը նկատեց փողոցներում ինչ վոր տարրինակ շարժում: Փողոցները լիքն էին մարդկանցով, վորոնք խիտ, դանդաղ շարժվում էին մի ուղղությամբ: Վերևից մարդկային

գլուխները բազմութիւնը նման եր մի լայնատարած, գունդգուն կապերով:

— Այդ ի՞նչ ե կատարվում,—հարցրեց Վիկտորը, և հանկարծ բացականչեց.—ա՛, գիտեմ, ցո՛ւյց ե դա: Բայց ինչու՞ համար արդո՞ր:

— Մի՞թե մոռացել յես, վոր այսոր մայիսի մեկն ե, միջազգային բանվորական տոնը:

Տեսարանը իսկապես գեղեցիկ եր:

— Նայի՛ր, նայի՛ր, ինչքան ժողովուրդ ե հավաքվել,—ճշում եր Վիկտորը:

— Դա միայն ցո՛ւյց ե տալիս, վոր ամբողջ ժողովուրդը հարգում ե այդ մեծ տոնը,—պատասխանեց Իվան Նիկալայևիչը:

— Փողոց գուրս գալով՝ ժողովուրդն իր համակրանքն ե արտահայտում: Յե՛վ դա մեծ նշանակութիւն ունի, վորպես բանվորների միջազգային համերաշխութեան ցույց:

Յունկերսը թռչում եր:

Մի քանի րոպե չանցած, քաղաքը շատ յետ մնաց, յե՛վ վերջապես կորավ աչքից:

Իվան Նիկալայևիչը հանեց պաշարեղենը, յերկու շէշ կաթ, ու սկսեց վորդու հետ ճաշել:

Ժամ ու կես անց, հորիզոնի վրա յերևացին Կովկասյան լեռնաշղթաների ձյունածածկ կատարները:

Մի հսկայական զանգակատան նման, մշտական ձյունով պատած, լեռնաշղթաների միջից բարձրանում եր Ելբրուսը:

Յերեսխան պոկ չեր գալիս պատուհանից՝ հայացքը մեխելով լեռնաշխթային:

Մի ինչ վոր խորհրդավոր, հուզիչ և գեղեցիկ բան կար այդ լեռների մեջ, վորոնք ատամնավոր պարիսպների նման բաժանվում եյին զանազան ուղղութեամբ:

Հավիտենական ձյունն ու սառույցը գեղեցիկ տեսարան եյին կազմել:

Ժամանակը թռչում եր անթարթի նման:

— Ահա և Կազբեկը,—ասաց Կրանցը, ցույց տալով դեպի ձախ:—Ելբրուսից հետո դա ամենաբարձր լեռն ե Կովկասում:



Նա ծովի մակերևույթից ավելի քան հինգ վերստ բարձր է:

Յունկերսը սաստիկ արագությամբ սլանում եր դեպի շղթան:

— Թերեք գետը, — ասաց Իվան Նիկալայիչը, ցույց տալով մի պղտոր գետ, վորի ալիքները արագ գլորվում էին կանաչ ափերի միջով: — Սա Տերսկի շրջանն է, Մեծ և Փոքր Կաբարդիան: Թերեկը իր սկիզբը առնում է Կազբեկի Դեդորակ կոչված սառցադաշտից և թափվում Կասպից ծովը:

Վիկտորը նկատեց, վոր ապարատը սկսում է նորից բարձրանալ:

— Հիմա մենք կթռչենք Կովկասյան լեռնաշղթայի վրայով:

«Լեռների կատարին Կովկասյան՝

«Թռչում եր նժդեհը դրախտի.

«Ներքեր ձյունի մեջ հավիտյան,

«Կազբեկը նման եր գմրուխտի»...

հիշեց Վիկտորը:

Փառահեղ Կազբեկը այժմ յերևում եր իր ամբողջ պերճությամբ, և նրա հավետ ձյունածածկ գագաթը՝ շաքարի գլխի նման բարձրանում եր լեռների միջից: Նրանից դեպի ձախ՝ բարձրանում եր Սեղանասարը, տափակ կատարով, վոր նման եր յերկու հստաբանների մեջ դրած մի մեծ սեղանի: Այդ լեռան վրա ձյուն չկար: Լեռան ստորոտը ծածկված եր անտառներով: Դեպի վեր՝ անտառները փոխվում էին թփուտների, ավելի վերը՝ խոտեր էին, վորից հետո սկսվում էին ապառաժ, բուսականությունից զուրկ, յերբեմն ձյունով ծածկված քարուտները:


Յունկերսի կայուղը ցրտեց: Վիկտորը նկատեց, վոր քանի բարձրանում են, շնչառությունն այնքան արագանում է՝ ողի նոսրանալու պատճառով:

Վիթխարի ոձերի նման յերևում էին լեռների ճեղքվածքները — բազմաթիվ հովիտները:

Յերբեմն — յերբեմն ժայռերի կանաչավետ լանջերին, ծիծեռնակի բներին նման, յերևում էին լեռնցիների աուլները:

Իրար վրա հենված սառցի հսկա ապառաժները կարծես նշանավոր Կազբեկի վտանները լինեին:

Լեռնաշղթայի ուսերին յերևում եր Ռազմավիրական ճանա-



ա. չէ սա ոճի նման, մեկ կորչելով կիրճերի մեջ, մեկ նորից յե-
րևալով:

Սև, վիթխարի յերախի նման բացվում էյին կիրճերն ու ձո-
րերը, վորոնց հատակին գլորվում եր պղտոր ջուրը:

Դա՛ Դարյալի նշանավոր կիրճն եր, վորի միջով մոնչալով
հոսում եր կատաղի թերեքը, քշելով իր հետ քարերի ահագին
կտորներ:

Բայց ահա Յունկերսը անցկացավ լեռնաշղթայի բարձր կա-
տարները, և տեսարանը իսկույն փոխվեց:

Նախկին վիթխարի տեսարանների փոխարեն, այժմ ճանապար-
հորդների առաջ բացվեցին աչքեր շոյող, գեղեցիկ վրաստանի տա-
րածությունները:

Փռվեցին կանաչ դաշտերը, ցանված արտերը ու խաղողի այ-
գիները, կանաչին էյին տալիս մարգագետինները...

Հայն ժապավենի նման փայլում եր Գուռ գետը, վորի ափերին՝
ասեմի բլուրներով ողակված կաթսայում՝ ընկած եր Անդրկով-
կասի գլխավոր քաղաք թիֆլիսը:

Հազար տեղակի մտածմունքներ, մեծ բանաստեղծների բերած
նմանություններ, խոնվում էյին վիկտորի գլխում, յերբ նա վե-
րեից նայում եր այդ չքնաղ տեսարաններին:

Բայց ահա ապարատը շուտով մոտեցավ քաղաքին և սկսեց
իջնել:

Մի քանի րոպե անց, նա արդեն կանգնել եր այերողորմում՝
ելի այնպես գեղեցիկ և փառավոր, ինչպես Լենինգրադից մեկնե-
լիս, տարածելով իր փերուզյա թևերը:

Յեվ յերբ մյուս ճանապարհորդների հետ միասին վիկտորը
դուրս ե գալիս կայուտից, նա հանկարծ ափսոսաց, վոր այդքան
քիչ եր տևել այդ սքանչելի ճանբորդությունը, վոր մի գեղեցիկ
յերազի յեր նման:



Լ. Ե. Ն. Ն. Յ. Ա. Ն. Գ. Ր. Ա. Գ. Ա. Ն.

Լույս են տեսել.

ԼԵՆԻՆ.—Պատգամներ յերիտասարդության.

ՍՈՑ. Բ. Ա. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն. Շ. Ա. Բ.

Լույս են տեսել.

ՍՏԱԼԻՆ.—Գյուղացիական հարց.

Ն. ԵԼԻՉԱՐՈՎ.—Ի՞նչ վորոշեց կուսակց. XIV համագումարը:

ԿԼԱՐՍ. ՅԵՏԿԻՆ.—(Կենսագրությունը).

Գ. Յ. Ո. Դ. Ա. Յ. Ի. Ա. Կ. Ա. Ն. Գ. Ր. Ա. Գ. Ա. Ն.

Լույս են տեսել.

ԼԻՎԻՆՍԿԻ.—Գյուղատնտեսական հարկ.

ՊՈԴՅԱՊՈԼՍԿԻ.—Աստծու կամքը թե՞ գյուղատն. գիտությունը.

ՅԱՉՎԻՅԿԻ.—Մարդկային բնակարանի պատմությունը.

ՎԼԱՍՈՎ.—Հողի մշակումը յերաշտի ժամանակ.

ԴՄԻՏՐՅԵՎԱ.—Տգիտությունը և սնահավատությունը.

ԳՈՒԳԼԻՆ.—Փորոզ փայտից մինչև տրակտոր:

Լ. ԻՅՈՉԵՖՈՎԻՉ.—Գեղ կանգնի գերան կկոտրի (կոոպեր. մասին).

ԲՐԱՆՍՔՈՒՐԳ.—Ընտ. կենդանիների վար. հիվանդութ.

ՍԿՈՄՈՐՈՆՈՎ.—Ի՞նչ ոգնությունը հիվանդ կենդան.

ԿՐԱՎՉԵՆԿՈ.—Թե ինչպես կարելի յե գյուղում ելքատրականություն
անցկացնել.

Ա. Ռ. Ո. Ղ. Ջ. Ա. Պ. Ա. Շ. Ա. Կ. Ա. Ն. Գ. Ր. Ա. Գ. Ա. Ն.

Լույս են տեսել.

ՍԵՄԱՇԿՈ.—Թոքախտ.

ՍՊԵՐԱՆՍԿԻ.—Մոր այբբենաբանը.

ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր.

ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխ. վարակիչ հիվանդութ.

Խ. Ո. Դ. Բ. Գ. Ա. Յ. Ի. Ա. Կ. Ա. Ն. Գ. Ր. Ա. Գ. Ա. Ն.

Լույս են տեսել.

ԵՍԻՊՈՎ.—Գյուղացիությունից պահանջները և խորհրդ. դպրոցի ծը-
րագիրը.

ԿՐՈՒՊՍԿԱՅԱ.—Լենինի պատգ. ժող. լուս. մասին.

ՏՅՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ.—Ազգային հարցը և դպրոցը.

ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտությունը I աստ. դպրոցում.

ԿՐԱՎՉԵՆԿՈ.—«Թե ինչպես Սաքոն կարմիր բանակային դարձավ»
(մանկ.-միջին և բարձր հաս.).

ՖՈԿՍ.—«Միսիստր մեկ ժամով» (մանկ.-միջ. և բարձր հաս.,
պատկերազարդ):

«Ազգային գրադարան»



NL0395351

ՈՐԼՈՎԵՅ.—«Ճամբորդութիւն աշերոպլանով» (մանկակ., պատկերազարդ, միջ. հասակ):

ՄԱՄԻՆ-ՍԻՐԻՐՅԱԿ.—«Մոծակի և արջի մասին» (մանկ., պատկերազարդ):

ԿՈՒՊՐԻՆ.—«Յերկրի խորքերում», (մանկ., պատկերազարդ, միջ. և բարձր հասակ):

ՌՈՒԴԵՆ.—Պիոներ, պահպանիւր առողջութիւնդ.

ՈՐԼՈՎԵՅ.—Քիմիկոս Կուզկան. (մանկ., պատկերազարդ, միջ. և բարձր հասակ):

ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպե՞ս եյին ապրում տիկնիկները (մանկական, պատկերազարդ):

ԲԵԼԼԵՏՐԻՍՏԻՎԱ

Լույս են տեսել

Մ. ԳՈՐԿԻ.—Պատկերներ.

Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ.—Պատկերներ.



ԳԻՆԸ 22 ԿՈՊ.